

**Հեռուստառադիոհեռարձակման ոլորտը կարգավորող իրավական դաշտի
վերլուծության ամփոփ գեկույց**

ՀՀ մասնավոր հեռուստառադիոընկերությունների արտոնագրումը և դրանց գործունեության վերահսկողությունը գործող օրենսդրության համաձայն իրականացնում է Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովը: Հաշվի առնելով հեռուստառադիոհեռարձակման ոլորտը կարգավորող մարմնի հատուկ կարգավիճակը եւ տվյալ ոլորտի նշանակալիությունը՝ ինչպես պետության, այնպես էլ ողջ հասարակության համար, «Հեռուստատեսության կարգավորումը Հայաստանում» ծրագրի շրջանակներում հեռարձակման ոլորտը կարգավորող իրավական դաշտի ուսումնասիրություն է կատարվել, որի արդյունքում վերլուծվել են ոլորտը կարգավորող օրենսդրությունը, ինչպես նաեւ Հանձնաժողի այն գործունեությունը եւ իրավական ակտերը, որոնք կապված են հաճախությունների հրապարակային, մրցութային կարգով հատկացման եւ մրցույթների արդյունքների մասին ամբողջական տեղեկատվության հրապարակման հետ:

Վերլուծության հիմնական առարկան էր «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքը, որը սահմանում է հեռուստառադիոընկերությունների կարգավիճակը, կանոնակարգում է դրանց հիմնադրման, արտոնագրման /լիցենզիավորման/ և ղեկավարման կարգը, իրավունքների ու պարտականությունների առաջացման հիմքերը, ինչպես նաև ստեղծման և գործունեության ընթացքում ծագող հարաբերությունները: Վերլուծվել են նաև «Գովազդի մասին» ՀՀ օրենքի այն նորմերը որոնք առնչվում են ուսումնասիրվող դաշտի հետ, «Չանզվածային լրատվության մասին», «Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքները և «Հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման լիցենզիավորման մրցույթի կարգը», որը հաստատվել է Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի 24.01.2002թ. թիվ 4 որոշմամբ: Նշված իրավական ակտերը կազմում են Հայաստանի Հանրապետությունում հեռուստառադիոհեռարձակման օրենսդրական դաշտը: Անշուշտ, հեռուստառադիոկայանների գործունեությունը կարգավորվում է նաև մի շարք քաղաքացիական, վարչական ու քրեական նորմերով, սակայն, բնականաբար, դրանք հետազոտության առարկա չեն հանդիսացել:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի գլուխ 5-ը ամբողջությամբ նվիրված է Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովին: Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի հասկացությանը նվիրված է Օրենքի 37 հոդվածը համաձայն որի հանձնաժողովը անկախ մարմին է՝ պետական հիմնարկի կարգավիճակով, որի գործունեությունը կարգավորվում է սույն օրենքով, իր կանոնակարգով և ՀՀ օրենսդրությամբ: Ազգային հանձնաժողովի գործունեությունն առնչվում է

միայն մասնավոր հեռուստառադիոընկերությունների արտոնագրման /լիցենզիավորման/ և վերահսկողության հետ: Օրենքի 39 հոդվածի համաձայն ՀՀ Նախագահն է նշանակում հանձնաժողովի անդամներին՝ վեց տարի ժամկետով: Օրենքի 2003 և 2004 թթ. լրացումներից հետո ՀՀ Նախագահն հաստատում է նաև թափուր տեղի համալրման համար մրցույթային կարգը /հոդված 45/: Հանձնաժողովի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են նույնպես ՀՀ Նախագահի հրամանագրով սակայն միայն օրենքի 45 հոդվածում նշված հիմքերի առկայության դեպքում: Անհրաժեշտ է հիշատակել, որ օրենքում նշված հիմքերի ցանկը սպառիչ է:

Օրենքը ընդունելուց հետո և մինչ օրս տարբեր ատյաններում խոսվում է այն մասին, որ Օրենքով սահմանված՝ կազմավորման կարգի դեպքում ինչպես Ազգային հանձնաժողովը, այնպես էլ իր առանձին անդամները չեն կարող ակախ լինել:

Ինչպես ցույց է տալիս միջազգային փորձի և միջազգային ակտերի ուսումնասիրությունը հեռուստառադիոհեռարձակման ոլորտի ընդհանուր զարգացման և մասնավոր հեռուստառադիոընկերությունների անկախության և ազատության համար լուրջ խնդիր /պրոբլեմ/ է հանդիսանում Կարգավորող մարմնի կազմավորման կարգը:

Հեռուստառադիոհեռարձակման ոլորտը կարգավորող մարմնի հատուկ կարգավիճակը և կազմավորման կարգը հիմնականում բնորոշվում է տվյալ ոլորտի նշանակալիությանը՝ ինչպես պետության, այնպես էլ ողջ հասարակության համար: Հաշվի առնելով տվյալ ոլորտի նշանակալիությունը և այն զարգացման նպատակով Եվրոխարհուրդը մշակելով Առաջարկություններ (2000)23 վարվեցողություն է առաջարկում պետությունների կառավարություններին՝

ա) ստեղծել անկախ կարգավորող մարմիններ հեռարձակման ոլորտում

բ) օրենսդրություններում նորմեր սահմանել, որոնք հնարավորություն կտան իրենց վրա դրված խնդիրները իրականացնել անկախության և թափանցիկության սկզբունքների հիման վրա.

Հեռարձակման ոլորտը կարգավորող մարմնի գործառույթների և անկախության մասին Եվրոխարհուրդի (2000)23 Առաջարկությունները կարգավորող մարմնի նշանակման համար որևէ կարգ չեն սահմանում: Մակայն նշված Առաջարկությունների բացատրական հուշաթղթում նշված է, որ կարգավորող մարմնի անդամները պետք է նշանակվեն /ընտրվեն/ ժողովրդավարության և թափանցիկության սկզբունքով: Հուշաթուղթը կարգավորման մարմնի նշանակման երկու մոտեցում է տարբերակում՝ մի դեպքում կարգավորող մարմինը կազմավորվում է տարբեր հասարակական կազմակերպությունների, կուսակցությունների կամ տեղական իշխանության կողմից և որպես կանոն այդ դեպքում անդամները գործում են

հասարակական հիմունքներով: Երկրորդ դեպքում՝ անդամները նշանակվում են օրենսդիր կամ գործադիր մարմնի կողմից, և վարձատրվում են իրենց աշխատանքի համար: Մեր հանրապետությունում, ինչպես արդեն նշվել է, Ազգային հանճնաժողովի անդամները նշանակվում են երկրի Նախագահի կողմից, սակայն օրենքի 41 հոդվածի համաձայն գործում են հասարակական հիմունքներով և իրենց գործունեության հետ կապված ծախսերի համար ստանում են ամսական դրամական փոխհատուցում:

Հուսով ենք, որ Սահմանադրական բարեփոխումներից հետո, որտեղ Կարգավորող մարմնի անդամների նշանակման այլ կարգ է սահմանված, հնարավորություն կստեղծի այդ մարմնի և նրա անդամների անկախ լինելու համար: ՀՀ Սահմանադրության փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի **Հոդված 83.2. համաձայն՝** «*Հեռարձակվող լրատվության միջոցների ազատության, անկախության եւ բազմազանության ապահովման նպատակներից ելնելով՝ օրենքով ստեղծվում է անկախ կարգավորող մարմին, որի անդամների կեսը վեց տարի ժամկետով ընտրվում է Ազգային ժողովի կողմից, իսկ մյուս կեսը նշանակվում է Հանրապետության Նախագահի կողմից՝ վեց տարի ժամկետով: Ազգային ժողովն այդ մարմնի անդամներին ընտրում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ*»:

Հեռուստառադիոհեռարձակման բնագավառի օրենսդրական դաշտի թերությունները չեն սահմանափակվում ՀՌԱՀ-ի ձևավորման խնդիրներով:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի կարգավարման առարկան ամրագրված է օրենքի 1 հոդվածում համաձայն որի «օրենքը սահմանում է հեռուստառադիոընկերությունների կարգավիճակը, կանոնակարգում է դրանց հիմնադրման, արտոնագրման (լիցենզիավորման) և ղեկավարման կարգը, իրավունքների ու պարտականությունների առաջացման հիմքերը, հեռուստառադիոընկերությունների ստեղծման ու գործունեություն ընթացքում ծագող հարաբերությունները»: Նշված հոդվածը ուսումնասիրելով կարող ենք հստակ ասել, որ կարգավորման առարկայի հետ խնդիր չի առաջանում: Սակայն ուսումնասիրելով օրենքը ամբողջությամբ տեսնում ենք, որ բացակայում են հիմնական նպատակները և սկզբունքները: Մեր կարծիքով, օրենքի հիմնական նպատակների և սկզբունքների բացակայության պատճառով օրենքում ամրագրված մոտեցումները չեն ապահովում սահմանափակված ռեսուրսների արդյունավետ օգտագործումը, լրատվության բազմակարծությունը ու անկախությունը, ինչպես նաև հեռուստառադիոծրագրերի բարձր որակը:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքը պաշտպանում է հայրենական արտադրության հեռուստառադիոհաղորդումներ արտադրողի շահերը հոդված 9-րդ-ով սահմանելով, որ հեռուստառադիոընկերությունների կողմից հայրենական արտադրության հաղորդումների հեռարձակումը մեկ հեռուստաալիքով (ռադիոալիքով) չի կարող ընդհանուր եթերաժամի 65

տոկոսից պակաս լինել: Սակայն դրա հետ մեկտեղ օրենսդիրը օրենքի 10 –րդ հոդվածով սահմանելով օտերերկրյա հեռուստառադիոընկերությունների հաղորդումների հեռարձակումը չի նպաստում և չի սպառնում հայրենական արտադրողի շահերի պաշտպանությունը: 10-րդ հոդվածի համաձայն օտարերկրյա հեռուստառադիոընկերությունների հաղորդումները Հայաստանի Հանրապետության տարածքում կարող են ամբողջությամբ վերահեռարձակվել միջպետական պայմանագրի կամ Ազգային հանձնաժողովի կողմից վերահեռարձակողին տրված արտոնագրի (լիցենզիայի) հիման վրա՝ օգտագործելով առկա հեռուստառադիոհաճախությունների մեկ հինգերորդից ոչ ավելին՝ յուրաքանչյուր ընդգրկույթի (դիսպազոնի) համար (մետրային, դեցիմետրային, կարճ, գերկարճ և այլ ալիքներ: Բացի այդ, վերահեռարձակման համար արտոնագիր (լիցենզիա) տալու կարգը նույն հոդվածի համաձայն պետք է սահմանի Ազգային հանձնաժողովը:

Ինչպես ցույց տվեց օրենսդրության ուսումնասիրությունը Ազգային հանձնաժողովի կողմից վերահեռարձակման համար արտոնագիր (լիցենզիա) տալու առանձին կարգ չի սահմանվել: Ազգային հանձնաժողովի 24.01.2002թ. թիվ 4 որոշմամբ ընդունված Հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման լիցենզավորման մրցույթի կարգի I գլխի 1 կետի համաձայն, նույն կարգով կանոնակարգվում է հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման, ինչպես նաև օտարերկրյա հեռուստառադիոընկերությունների հաղորդումների ամբողջական վերահեռարձակման մրցույթով լիցենզավորումը: Կարծում ենք, նույն կարգով նպատակահարմար չէ կանոնակարգել և հեռարձակումը և վերահեռարձակումը: Ինչպես դրա վառ սպացույց կներկայացնենք մեկ օրինակ: Ինչպես ցույց տվեց ուսումնասիրությունը, Ազգային հանձնաժողովը 10 հոկտեմբերի 2002թ. թիվ 73-Ա որոշմամբ Երևան քաղաքի տարածքում 58-րդ դեցիմետրային կապուղիով հեռուստահաղորդումների հեռարձակման լիցենզավորման մրցույթ էր հայտարարել: Նույն հայտարարությամբ առաջադրվել էին ինչպես հեռարձակման, այնպես էլ վերահեռարձակման պայմանները: Եվ ի վերջո, նախապատվությունը տրվել էր «ԷՎ» հեռուստաընկերությանը, որը թիվ 68 լիցենզիայի համաձայն ամբողջությամբ վերահեռարձակում է «CNN» հեռուստընկերության ծրագիրը, մինչդեռ այդ հաճախության համար մրցույթային առաջարկ էր ներկայացրել նաև «Նոյան տապանը», որի առաջարկի համաձայն նա պարտավորվում էր սպառնալից հայրենական արտադրության հաղորդումների օրենքով նախատեսված ծավալը:

Օրենքում օգտագործվում են մի շարք հասկացություններ, որոնք նախկինում բացակայում էին ՀՀ օրենսդրությունում կամ սահմանված չէին և/կամ օգտագործվել են բառերի ընդհանրական իմաստով: Օրենքում օգտագործվող հասկացությունների հստակ սահմանումը չափազանց կարևոր է, քանի որ մեծամասամբ խոսքը տեխնիկական և նեղ մասնագիտական տերմինների մասին է, որոնք ոչ հաճախ հանդիպում են իրավական ակտերում: Միևնույն

Ժամանակ, հաշվի առնելով այն, որ այսօր հեռուստառադիոհեռարձակման օրենսդրական դաշտը ընդլայնվում է, ներառելով միջազգային իրավունքի բազմաթիվ նորմերը, կարևոր է նաև ապահովել օրենքում և բազմաթիվ միջազգային իրավական նորմերում սահմանումների ներդաշնակությունը: Օրենքի 3-րդ հոդվածում ամրագրված որոշ հասկացությունները ոչ հստակ են սահմանված կամ էլ ընդհանրապես սահմանված չեն, սակայն օգտագործում են օրենքի տարբեր նորմերում: Հիմնական սահմանումները ամրագրելուց օրենսդիրը անտեսել է ոլորտը կարգավոր միջազգային ակտերը և միջազգային փորձը:

Օրենքով սահմանված «վերահեռարձակում» հասկացությունը, որը կարևոր դեր է խաղում ոլորտում գործունեության որոշակի տեսակի սահմանման հարցում, տարբերվում է «Անդրասահմանային հեռուստատեսության մասին» Եվրոպական Կոնվենցիայում օգտագործվող համապատասխան հասկացության սահմանումից (հոդ. 2) և «վերահեռարձակում» բառի իմաստային ընկալումից: Կոնվենցիայի պարզաբանական գեկույցի 87 կետի համաձայն՝ վերահեռարձակումը պետք է բնորոշվի երեք հատկանիշներով՝

- հեռարձակվող հաղորդման միաժամանակյա հեռարձակում,
- հաղորդման լրիվություն և
- անփոփոխություն:

Երեք հատկանիշներից մեկի բացակայության դեպքում, պետք է խոսել ոչ թե վերահեռարձակման այլ նոր հեռարձակման մասին՝ մի այլ հեռուստառադիոընկերության ծրագրերի կողմից ստեղծված ծրագրերի հեռարձակում: Մինչդեռ՝ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 3 հոդվածի համաձայն *«վերահեռարձակում է համարվում հեռարձակվող կազմակերպության հողորդման (ծրագրի) միաժամանակյա կամ արդեն հեռարձակված և ամրագրված (ձայնագրված և (կամ) տեսագրված) հաղորդման հետագա հեռարձակում մեկ այլ հեռարձակվող կազմակերպության կողմից»:*

Այն փաստը, որ Օրենքում ու Կոնվենցիայում օգտագործվող հասկացությունները տարբերվում են միմիանցից ինքնին խնդիր չի առաջացնում, սակայն օրենքում օգտագործվող «վերահեռարձակում» հասկացության սահմանումը սխալ է բնութագրում այդ գործունեության տեսակը, որն հանդիսանում է օրենքի կարգավորման օբյեկտ:

Մյուս լուրջ խնդիրներից է՝ Օրենքի 24 հոդվածի վերջին պարբերության անհաջող ձևակերպումն է: Ընհանուր հոդվածը նվիրված է հեռուստահաղորդումների չարաշահման անթույլատրելիության: Հոդվածի վերջին պարբերությունը նվիրված է էրոտիկ բնույթի հեռուստառադիոհաղորդումների և սարսափ ֆիլմերի հեռարձակմանը, որը պետք է կատարվի ժամը 24.00-6.00-ը: Օրենքը չի սահմանում էրոտիկ բնույթի հեռուստառադիոհաղորդումների և սարսափ ֆիլմերի հասկացությունը: Նման հաղորդումների չափորոշիչները օրենքի համաձայն պետք է սահմանվի ՀՀ կառավարության կողմից: Սակայն մինչ օրս

Կառավարության կողմից ընդունված չէ որոշում, որը կկարգավորեր նշված հարցերը: Բացի այդ կոռեկտ չէ պարբերության ձևակերպումը, մասնավորապես եթե անդրադառնանք հոդվածի տեքստին, ապա կոտեսենք, որ օրենսդիրը սահմանափակում է էրոտիկ բնույթի հեռուստառադիոհաղորդումների հեռարձակումը, սակայն չի սահմանափակում էրոտիկ ֆիլմերի հեռարձակումը: Նույնը վերաբերում է սարսափ ֆիլմերի հեռարձակմանը, ստացվում է, որ սարսափ ֆիլմերի հեռարձակումը սահմանափակվում է, սակայն ցանկացած ժամերին կարելի է հեռարձակել սարսափ բնույթի հեռուստառադիոհաղորդումները:

Օրենքի 28 հոդվածի 1 կետի «ա» և «բ» պարբերություններում օգտագործվում է «առևտրային գովազդ» հասկացությունը: Գովազդը ընդհանրապես և գովազդը զանգվածային տեղեկատվության էլետրոնային միջոցներում կարգավորվում է «Գովազդի մասին» ՀՀ օրենքով, իսկ այդ պատճառով անդրադառնալով նշված օրենքին, կոտեսենք որ «առևտրային գովազդ» հասկացությունը ընդհանրապես ամրագրված չէ օրենքի 2 հոդվածում մյուս հասկացությունների շարքում: Ուստի անհրաժեշտ ենք համարում «Գովազդի մասին» ՀՀ օրենքում տալ «առևտրային գովազդ» հասկացությունը, հակառակ դեպքում «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածի 1 կետի «ա» և «բ» կետեր կիրառելիս կառաջանան մեկնաբանության խնդիրներ:

Մյուս հարցը, որին կցանկանայինք ուշադրություն դարձնել, «սոցիալական գովազդն» է: «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 13 հոդվածի համաձայն «գովազդակիրը պարտավոր է բնակչության առողջության և առողջապահության, բնության պահպանության, սոցիալական պաշտպանության հարցերով ազգային շահեր ներկայացնող և առևտրային բնույթ չկրող սոցիալական գովազդների համար առաջնահերթ տրամադրել գովազդին հատկացվող տարեկան եթերային ժամանակի (տպագրական մակերեսի) ոչ պակաս, քան 5 տոկոսը»: Նշված հոդվածի առաջին խնդիրը կապված է սոցիալական գոցազդի արտադրության և տեղաբաշխման համար խրախուսման բացակայությամբ: Երկրորդ խնդիրը կապված է այդ տեսակի գովազդի համար սահմանված ծավալի վերահսկողության հետ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 14 հոդվածի համաձայն հեռուստառասիտրոնկերությունները պարտավոր են պահպանել իրենց հեռարձակած հաղորդումների տեսագրությունները և ձայնագրությունները՝ հեռարձակման օրվանից սկսած մեկ ամսվա ժամկետով, կարծում ենք, որ օրենքով սահմանված ծավալի վերահսկումը տարեկան կտրվածքով պարզապես անհնարին կլինի : Եւ որպես հետևություն, անհրաժեշտ ենք գտնում նշված նորմը հստակեցնելու և այն կիրառելիս նշված խնդիրները չառաջանալու նպատակով օրենսդրությունում որոշ փոփոխություններ կատարել:

2003թ. փոփոխություններից հետո, օրենքի 50 հոդվածը լրացվել է ևս մեկ պահանջով, համաձայն որի, «Ազգային հանձնաժողովը պետք է պատշաճ կերպով հիմնավորի արտոնագրատիրոջն ընտրելու, արտոնագիր տալը մերժելու և արտոնագիրն ուժը կորցրած ճանաչելու մասին որոշումները»: Մակայն հանձնաժողովը իր գործունեության ընթացքում կայացնում է մի շարք այլ որոշումներ, որոնք կարծես թե կարող են և հիմնավորված չլինել: Այնպես է ստացվում, որ հանձնաժողովը կարող է առանց որևէ հիմնավորման որոշում կայացնել լիցենզիայի գործողությունը կասեցնելու կամ լիցենզիայի գործողությունը դադարեցնելու մասին, կամ էլ այլ տույժեր կիրառելու մասին: Անհրաժեշտ է լրացնել օրենքը ևս մեկ դրույթով, որը կպարտադրի ազգային հանձնաժողովին հիմնավորել իր կողմից ընդունվող բոլոր որոշումները:

Պատասխանատվությունը Հայաստանի Հանրապետության «Հեռուստատեսության և ռադիոյի մասին օրենքի» խախտման համար սահմանված է 58 հոդվածով: Հոդվածի դրույթների համաձայն Ազգային հանձնաժողովն իրավասու է՝

- կիրառել վարչական տույժ՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև հինգհարյուրապատիկի չափով.
- իր որոշմամբ կասեցնել հեռուստառադիոընկերության կամ նրա հաղորդաշարի գործունեությունը՝ մինչև դատարանի կողմից համապատասխան որոշման կամ վճռի օրինական ուժի մեջ մտնելը.
- օրենքի 55-րդ հոդվածով նախատեսված դեպքերում իր որոշմամբ ուժը կորցրած ճանաչել հեռուստառադիոընկերության արտոնագիրը:

Հոդվածի 3-րդ կետի համաձայն Ազգային հանձնաժողովին լիազորված իրավասությունների կիրառման դեպքերը և կարգը սահմանվում է Ազգային հանձնաժողովի կանոնակորգով (հետագայում Կանոնակարգ):

Կանոնակարգի 91 հոդվածը սահմանում է լիցենզիայի գործողությունը կասեցնելու հիմքերը՝ որոնցից 6-ը հստակ նշված են, իսկ է) ենթակետը խոսում է օրենքով նախատեսված այլ դեպքերի մասին: Նման սահմանումը հստակ պատկերացում չի տալիս թե դրանք որոնք են և հետևաբար Ազգային հանձնաժողովը հնարավորություն կունենա բազմաթիվ այլ դեպքում կասեցնել լիցենզիան (դա ընդամենը մեկնաբանության հարց է):

Կանոնակարգի 93 հոդվածը չի հիշատակում լիցենզիայի գործողությունը դադարեցնելու դեպքերը, այլ հղում է կատարում «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածին: Նշված հոդվածը ուսումնասիրելուց հետո պարզվում է, որ այնտեղ հիշակատված դեպքերից մի քանիսը նշվում են նաև Կանոնակարգի 91 հոդվածում և հիմք են հանդիսանում լիցենզիայի գործողությունը կասեցնելու համար: Հետևաբար օրենսդիրը հնարավորություն է տալիս Ազգային հանձնաժողովին նույն հիմքերի առկայության դեպքում տարբեր սուբյեկտիվ մոտեցումներ ցուցաբերել այս կամ այն հեռուստաընկերության նկատմամբ՝ նույն հիմքերի առկայության դեպքում՝ կասեցնել կամ դադարեցնել գործունեությունը:

Օրենքի և Կանոնակարգի լիցենզիայի գործողությունը կասեցնելու մասին նորմերը ոչինչ չեն ասում կասեցման ժամկետի մասին և իմ կարծիքով, դա օրենսդրության բացերից մեկն է: Այդ թերությունը վերացնելու համար անհրաժեշտ է սահմանել ողջամիտ ժամկետ, որով կորոշվի կասեցման ժամանակահատվածը: Օրենքի 37 հոդ. «ը» և 58 հոդ. «բ» կետերի համաձայն Ազգային հանձնաժողովը կասեցնում է հեռուստառադիոընկերությունների գործունեությունը մինչև դատարանի որոշում կայացնելը: Կանոնակարգի 90 հոդվածի համաձայն՝ «լիցենզիայի գործունեության կասեցումը կիրառվում է հեռուստառադիոընկերության կամ նրա հաղորդաշարի գործունեությունը **ժամանակավորապես** արգելելու միջոցով»: Հեռարձակման ոլորտը կարգավորող մի շարք երկրների օրենսդրության ուսումնասիրությունը ցույց է տալիս որ այդ երկրներում արտոնագիրը կասեցնելու համար սահմանված է կոնկրետ ժամանակահատված:

Մեր հանրապետության Օրենսդիրը ընդհանրապես չի սահմանում՝ ո՞վ է դիմում դատարան և ի՞նչ պահանջով և եթե չդիմեն դատարան, ապա ի՞նչ է լինելու և որքան ժամանակ գործունեությունը կասեցված կլինի: Իմ կարծիքով ավելի ողջամիտ կլինի օրենսդրությամբ սահմանել լիցենզիայի կասեցման ժամկետ, որը հնարավորություն կտա հեռուստառադիոընկերությանը վերացնել թերությունները և հետևաբար խուսափել դատական քաշքշուկներից: Իսկ նշված ժամկետի ընթացքում հեռուստաընկերության կողմից կասեցման հիմքերը չվերացնելու կամ հանձնաժողի որոշումը չբողոքարկելու դեպքում, դա հիմք կհանդիսանա հանձնաժողովին կասեցման ժամկետի ավարտից հետո դիմել դատարան՝ տրված արտոնագրի ուժը կորցրած ճանաչելու պահանջով:

Արբանյակային հեռուստառադիոհեռարձակմանը և հեռուստահաղորդակցությանը անդրադառնում է Օրենքի 25 հոդվածը: Սակայն օրենքում բացակայում է արբանյակային հեռուստառադիոհեռարձակման ստույգ կարգավորումը: Արբանյակային կապից օգտվելու առաջնային իրավունքը պատկանում է Հանրային հեռուստաընկերությանը: Ազատ եթերաժամի առկայության դեպքում դա կարող է վարձակալության հիմունքներով տրամադրվել նաև մասնավոր հեռուստաընկերություններին՝ Հանրային հեռուստաընկերության խորհրդի համաձայնության առկայության դեպքում: Սակայն նույն օրենքի 32 հոդվածի համաձայն «Խորհրդի իրավասություններ», Խորհուրդը մնան իրավասություն չունի: Օրենքը չի սահմանում նաև թե արբանյակային կապուղիներով հեռարձակվող հաղորդումները պետք է ներկայացնեն իրենցից ազատ եթերի կամ կաբելային ցանցով հաղորդումների կրկնությունը, թե կարող են տարբերվել եթերային քաղաքականության և բովանդակության իմաստով: Արբանյակային հեռարձակման հետ մի այլ խնդիր կա: Օրենքի 9 հոդվածի համաձայն, հեռուստաընկերությունների կողմից հայրենական արտադրության հաղորդումների հեռարձակումը մեկ հեռուստաալիքով չի կարող ընդհանուր եթերաժամի 65 տոկոսից պակաս լինել: Ընդ որում սույն

դրույթները չեն գործում կողավորված հեռուստահաղորդումների նկատմամբ: Մակայն հայտնի է, որ արբանյակային հեռուստաալիքները կարող են լինել ինչպես կողավորված, այնպես էլ ազատ: Պարզ չէ թե ինչու բացառություն չեն կազմում արբանյակային «բաց» հեռուստահաղորդումները: Քանի որ, օրենքը չի սահմանում արբանյակային հեռարձակման համար լիցենզիա ստանալու որևէ կարգ, հետևավարար այդ հեռարձակման նկատմամբ չպետք է կիրարկել օրենքով նախատեսված պահանջները և սահմանափակումները:

Ավարտելով կարգավորման պրակտիկայի վերլուծությունը, կարող են ասել, որ Հեռուստատեսության և ռադիոյի Ազգային հանձնաժողովը իր գործունեությունը իրականացնելիս մի շարք որոշումներ է ընդունում, որոնց մի մասը ոչ միշտ է, որ համապատասխանում է ՀՀ օրենսդրության պահանջներին, իսկ որոշ դեպքերում հանձնաժողովի կողմից ընդհանրապես չեն ընդունվում օրենսդրությամբ նախատեսված որոշումները: Նշված փաստերը հաճախ դատական վեճերի հիմք են հանդիսացել, որոնցից մեր կարծիքով, կարելի էր հուսափել, եթե պահպանվեին ՀՀ օրենսդրության պահանջները:

«Ինտերնյուս» ՀԿ

իրավաբան

Օ.Սաֆարյան